

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ԳԱՂԱՓԱՐԱԳՐԵՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱԳՏՈՋՅԱՆ

Սեպագիր լեզուներից յուրաքանչյուրը, այդ թվում նաև ուրարտերենը, վանկագիր բառերին զուգահեռ, տեղ շահելու նպատակով, հաճախ օգտագործում է գաղափարագիր բառեր, որոնք երբեմն հրատարակիչների կողմից չեն գիտակցվում և վերծանվում են ուշացումով:

Վերջին 25 տարվա ընթացքում (1950—1975 թթ.) այդ ուղղությամբ կատարված աշխատանքներում մեծ ավանդ ունեն Բ. Պիոտրովսկին¹, Գ. Մելիքիշվիլին², Ֆ. Քյոնիգը³, Ի. Դյակոնովը⁴, Ն. Հարությունյանը⁵, Մ. Իսրայելյանը⁶, Վերջերս մեզ հաղորդեց ինչպես ճշգրտել, այնպես էլ վերծանել մի խումբ գաղափարագրեր ևս (LUKU «տակերիչ», HUN-GÁ «վարձկան», LÚNIG-SAG «ծառ(2)», GÍR «թուր», GÍŠNA «թմբուկ», NÍG-GA «գանձարան», ZIZ «հաց», GÍ «վերադառնալ», Á «զորութիւն», HA «մառ», KUS-PA «սանձ», BAL «փորել», TEMEN «հողաշերտ» և այլն)⁷, որոնց թվում նաև մեկ գաղափարագիր տեղանուն (URUNA-ANŠE, որի տակ հասկացվել է Ուրարտուի Արծաշքու մայրաքաղաքի, հետագայում Արճեշ քաղաքի անունը)⁸:

Վերջերս Ն. Հարությունյանը վերծանեց մի նոր գաղափարագիր ևս՝ AM (աքքադ. karrādu) «խիզախ», «արի», «հերոս»⁹, որը, սակայն, Մ. Իսրայելյանը համարում է գաղափարագիր տեղանուն, այն է՝ AM-Ū («վայրի ցուլ» և «դաշտ» իմաստով), որը կարելի է դիտել որպես Ցլադաշտ¹⁰, Եթե հիշյալ տեսակետներից հավանական համարվի երկրորդը, ապա, թերևս, հնա-

¹ Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, II, III, Ереван, 1950, 1952, 1955 և այլ աշխատություններում:

² Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960 (այսուհետև՝ УКН) և այլուր:

³ F. W. König, Handbuch der chaldischen Inschriften, Graz, 1955—1957 (այսուհետև՝ HChI):

⁴ И. М. Дьяконов, Урартские письма и документы, М.—Л., 1963 (այսուհետև՝ УПД) և այլուր:

⁵ Н. В. Арутюнян, Новонайденная клинообразная таблетка из раскопок Кармир-блур («Вестник древней истории», 1957, № 3, էջ 144—149); Н. В. Арутюнян, К. Л. Оганесян, Новые урартские надписи из Эребуни («Вестник древней истории», 1970, № 3, էջ 107—112); Н. В. Арутюнян, Новые урартские надписи Кармир-блур, Ереван, 1966 և այլուր:

⁶ Մ. Ա. Իսրայելյան, Մի անհայտ սեպագիր արձանագրություն (ՀՍՍՐ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1961, № 12, էջ 42, 43), նույնի՝ Ուրարտագիտական դիտողություններ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1970, № 3, էջ 83), նույնի՝ Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971, էջ 70, 184:

⁷ Հ. Հ. Կարապետյան, Անհայտ գաղափարագրեր հայտնի կոթողների վրա (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 10 (այսուհետև՝ ԱԳՀԿՎ), էջ 94—105:

⁸ Օ. Օ. Карагезян, Локализация урартского царского города Арцашку (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1978, № 5) (այսուհետև՝ ЛУЦГА), էջ 94—96:

⁹ Ն. Վ. Հարությունյան, Ճշգրտումներ ուրարտական սեպագրերում («Պատմաբանասիրական հանգես», 1976, № 3, էջ 70):

¹⁰ Մ. Ա. Իսրայելյան, Ճշտումներ ուրարտական արձանագրություններում (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1977, № 4, էջ 57, 61 և ծան. 70):

րավոր կլինի այդ բառի տակ տեսնել հետագայի Տուրուքերան նահանգի նախնական անվանումը: Մ. Իսրայելյանը միաժամանակ վերծանում է KUR (աքքադ. kašadu) «գրավել» և HAL (աքքադ. petû) «բանալ» գաղափարագրերը¹¹, ինչպես նաև ուրարտերենի LX «վաթսուհի» թվականի գրությունը որպես վեց տասնյակով կազմված գաղափարագիր¹²:

Ուրարտական գաղափարագրերի վերծանումը հիշյալ աշխատանքներով չի սահմանափակվում: Այն դեռևս պահանջում է տեական և քրտնաջան պրպտումներ: Նման մոտեցումը մեզ հանգեցրեց այն հետևություն, որ ուրարտական արձանագրություններում դեռևս կան մի քանի տասնյակ անհայտ գաղափարագրեր, որոնցից այստեղ ներկայացնում ենք հետևյալները:

1. Արգիշթե I-ին (786—764 թթ. մ. թ. ա.) պատկանող՝ Լեղք գյուղում հայտնաբերված ուրարտական սակավաբառ մի կոթողի վրա հանդիպում է NA₄ŠU-a-l-e անժանոթ բառը¹³, որը գրեթե միևնույն ձևով տրված է արձանագրության մի այլ հրատարակության մեջ¹⁴: Գ. Մելիքիշվիլին հիշյալ բառը չի թարգմանում¹⁵, իսկ Ֆ. Քյոնիգը այն նմանեցնում է teraje բառին¹⁶, այսինքն՝ դիտում է որպես ներգործական սեռի բայերից կազմված կրավորական տիպի հարակատար դերբայ: Դժբախտաբար, այս եզրակացությունը հիմնավորել հնարավոր չէ, քանի որ տվյալ դեպքում անտեսված են նման դերբայների կազմության ձևերն ու օրինաչափությունները:

Մեր կարծիքով, վանկագիր ձևով ներկայացված այս բառը անհրաժեշտ է դիտել որպես գաղափարագիր՝ իր հնչյունային լրացմամբ հանդերձ, այն է՝ NA₄ŠU-A-l-e, այսինքն՝ կցական -je «-իր» («-իմ») դերանվան առկայությամբ: Քանի որ սեպագրության մեջ հայտնի է GIŠŠU-A [աքքադ. littu(?)] «աթոռ» գաղափարագիրը¹⁷ (NA₄ «քար» բացահայտիչի փոխարեն GIŠ «փայտ» բացահայտիչով), ապա մեր կարծիքը կարող է հավանական համարվել: Ուստի, ամբողջ արձանագրությունը կարելի է տառադարձել և թարգմանել հետևյալ կերպ. 'Ar-gi-iš-ti-še a-le-e l-né ú-hi-né NA₄ŠU-A-l-e, այսինքն՝ «Արգիշթեն ասում է. — Այս բարձունքը (?) (է) աթոռ(անիստ)ն-իմ»: Եթե նկատի ունենանք, որ արձանագրության հայտնաբերման վայրը՝ Լեղք գյուղը գտնվում է Վան քաղաքից (Ուրարտուի Տուշպա մայրաքաղաքից) ընդամենը մի քանի կիլոմետր հյուսիս-արևելք և հենց գյուղի մոտ վեր են խոյանում անմատչելի լանջերով մի քանի ժայռաբլուրներ (այսինկոյս քան ՂՎանտոսպ, ի տեղումն արձանաշար քարակարկառ գոգաձև միջոցի երկուց բլրակաց, որ հայի յժրիվարաց արկման դաշտն, ի վերայ Լեզուտ գեաւզնն)¹⁸, որոնցից ամենաբարձրի՝ Արալեզի գագաթին, կա հնադարյան մի կռատուն¹⁹

¹¹ Նույն տեղում, էջ 55:

¹² М. А. И с р а е л я н, Уточнения к чтению урартских надписей («Древний Восток», № 2, Ереван, 1976, էջ 116—117):

¹³ УКН, № 153, տող 4 (որտեղ l=1):

¹⁴ НСН, № 94, տող 4:

¹⁵ УКН, էջ 272, 411:

¹⁶ НСН, էջ 110, ծան. 6:

¹⁷ René Labat, Manuel d'épigraphie akkadienne, Paris, 1952 (տյունահետև՝ МЕА), № 545:

¹⁸ «Թ ո վ մ ա յ ի վարդապետի Արժրունւոյ, Պատմութիւն տանն Արժրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 347:

¹⁹ С р б у н Л и с и ц и а н, Старинные пляски и театральные представления армянского народа, I, Ереван, 1958, աղյուսակ LXIV (էջ 138-ից հետո):

(հավանաբար, ուրարտական շրջանից մնացած), ապա մեր ենթադրությունը կարող է ավելի քան հավանական համարվել:

2. Խորիսոռյան տարեգրության կրկնօրինակում, դեպի Ճորոխի ավազանը կատարած արշավանքի նկարագրության մեջ, Արգիշթե I-ը հիշատակում է. *te-ru-[bé] [D]UB-[te URUZu-a-ni]-[a] šī-a-de KUR KÁ(?) -še-e²⁰*: Գ. Մելիքիշվիլին թեև KÁ(?) -še-e արտահայտությունը թարգմանում է «դարպաս-ներին միջով»²¹, սակայն, վստահ չէ KÁ(?) գաղափարագրի տառադարձության ճշմարտության մեջ²²: Միանգամայն օրինաչափ կլիներ տվյալ հատվածում տեսնել GĒNKĀ գաղափարագիրը և դիտել այն որպես «դրունք», այն է՝ «լեռնանցք», սակայն, šīade «ելա» բայի առկայությունը ի չիք է դարձնում նման ենթադրությունը: Ֆ. Փյունիզը տվյալ դեպքում մոտավորապես այդպես էլ վարվում է՝ KURKĀ -še-e²³. սակայն, այդ բառի տակ դիտում է KURŠešetina (իմա՝ GĒNŠešetina) տեղանվան գաղափարագրի տարբերակը²⁴, քանի որ KĀ գաղափարագրի տակ Կանդես է գալիս ուրարտերեն *seštele* «դարպասներ» բառը, որը և որոշակի նմանություն ունի վերոհիշյալ տեղանվան հետ: Ուրարտացիների կողմից այսպիսի ժողովրդական ստուգաբանությունը և համապատասխան վանկագիր բառի փոխարեն նման գաղափարագրի օգտագործումը կարելի էր միանգամայն օրինաչափ համարել, սակայն, արձանագրության լուսանկարը²⁵, որը հիմք է ծառայել բոլոր վերծանումների համար, ցույց է տալիս, որ այնտեղ կարծեցյալ KĀ «դարպասներ» գաղափարագրի փոխարեն ավելի շուտ առկա է մի գաղափարագիր, որը սեպագրության մեջ դիտվում է որպես ULLŪ (աքքադ. *ullu*) «շղթա»²⁶, Հետևաբար, KUR «երկիր» բացահայտիլը դիտելով որպես GĒN «լեռ», կարելի է վերծանել GĒNULLŪ գաղափարագիրը և թարգմանել այն որպես «լեռնաշղթա», տրված եզակի թվի ներգոյական-երկրորդ հոլովով, այն է՝ GĒNULLŪ -še-e «լեռնաշղթայով»: Սակայն նկատենք, որ ուրարտերենում նման հոլովաձևերը թարգմանվում են նաև այլ իմաստներով: Օրինակ, նույն Խորիսոռյան տարեգրության մեջ ասվում է. *DĪal-di-ni-né al-su-i-si-[né us]-ta-a-de KURĪa-ti-l-na-a -še-e²⁷*, որի բառացի թարգմանությունն է. «Խալդյան մեծությամբ արշավեցի Խաթինեիկում», սակայն, որի օրինաչափ թարգմանությունը հետևյալն է. «Խալդյան մեծությամբ արշավեցի Խաթինեիկի-վրա»: Ուստի, *te-ru-[bé] [D]UB-[te URUZu-a-ni]-[a] šī-a-de GĒNULLŪ -še-e* քննվող հատվածը կարելի է թարգմանել ոչ թե «Դրեցի արձանագրություն Ջուանեում, ելա լեռնաշղթայով», այլ՝ «Դրեցի արձանագրություն Ջուանեում, ելա լեռնաշղթայի-վրա»: Արգիշթե I-ը շարունակելով իր միտքը, ասելիքն ավելի է կոնկրետացնում. *GĒNĀš-[a]-la-[a-šī-i-e]-de²⁸*, այսինքն՝ «Աշկալա-

²⁰ YKH, № 128, B1, տող 5 (որտեղ *bé=bi, de=di, še=ši, hi ni վանկը վերահանգնվում է մեր կողմից*):

²¹ YKH, էջ 235:

²² YKH, № 128, B1, ժան. 6:

²³ HChI, № 82, Rs, տող 5:

²⁴ Նույն տեղում, էջ 105 (ժան. 5), 190, 201:

²⁵ C. F. Lehmann-Haupt, Corpus Inscriptionum Chaldicarum, I—II, Berlin und Leipzig, 1928—1935 (այսուհետև՝ ClCh), Tafel XXVI:

²⁶ MEA, № 228.

²⁷ YKH, № 127, II, տող 15 (որտեղ *né=ni, ae=a1, še=ši*):

²⁸ YKH, № 128, B1, տող 6 (որտեղ *GĒN=KUR, de=di*):

շեհի-վրա», որը մի անգամ ևս հաստատում է մեր վերոհիշյալ տառադարձության և թարգմանության ճշտությունը: Հետևաբար, Արգիշթե I-ը մ. թ. ա. 785 թ. Ճորոխի ավազանում բարձրանալով (մեր կարծիքով՝ Պոնտական) լեռնաշղթայի վրա, ավելի ստույգ՝ նրա մասը կազմող Աշկալաշե լեռան գագաթը, կարող էր միայն մի նպատակ հետապնդել՝ տեսնել Սև ծովը: Հիշենք, որ մ. թ. ա. 401—400 թթ. ձմռանը Հայաստանի վրայով նահանջող տասհազարանոց հունական վարձկան բանակի մարտիկները մոտավորապես նույն վայրում, Թեխես (Θήξης) լեռան վրայից տեսան Սև ծովը²⁹:

3. Ռուսա II-ի (685—645 թթ. մ. թ. ա.) ժամանակաշրջանի սալիկներից մեկի վրա Ի. Դյակոնովը կարդում է. XX XX XX (!) VIII SALGAD-hi-e³⁰, այսինքն՝ «68 ջուհակուհի(?)»³¹: Սակայն, արձանագրության լուսանկարի³² ուսումնասիրությունը ցույց է տալիս հետևյալը.

ա) XX XX XX (!) «վաթսուն» թվականի՝ նման տառադարձությամբ, որ նույն արձանագրության մեջ հանդիպում է մեկ անգամ ևս³³, Ի. Դյակոնովը, փաստորեն, հաստատում է այն միտքը, որ ուրարտեների քանակական թվականների հիմքում (քսանից բարձր) ընկած է հաշվարկման քսանական սիստեմը, ինչպես, ասենք, վրացերենում: Օրինակ. oci (ოცი) «քսան», otmoci (ოცმოცი) «քառասուն» («երկու քսան»), samoci (სამოცი) «վաթսուն» («երեք քսան»), otxmoci (ოცხმოცი) «ութսուն» (չորս քսան), որը օգտագործվել է նաև հայ պոեզիայում (սեւ է չորս քսան տարիս լրացավ)³⁴: Սակայն, արձանագրության մեջ գրված է ոչ թե երեք հատ քսան, ինչպես տառադարձել է Ի. Դյակոնովը, այլ վեց հատ «տաս», ինչպես ճիշտ նկատել է Մ. Իսրայելյանը³⁵, այսինքն՝ LX «վաթսուն», որի հիմքում ընկած է հաշվարկման ոչ թե քսանական, այլ տասնական սիստեմը: Հետևաբար, ուրարտեները մյուս սեպագիր լեզուներից տարբերվում է նրանով, որ «60» թվականը գրվում է վեց տասնյակով և ոչ թե մի ուղղահայաց սեպով՝ GÍŠ=LX «վաթսուն», ինչպես այն ընդունված է առհասարակ³⁶:

բ) Ի. Դյակոնովը վրիպել է նաև հաջորդ VI «վեց» թվականը գրելիս, որը նա տառադարձել է VIII «ութ», այնինչ VIII «ութ» գաղափարագիրը գրվում է որպես VI «վեց» և կողքին՝ իրար վրա, երկու ուղղահայաց սեպ, ինչպես այդ առկա է հենց միևնույն արձանագրության մեջ, այն էլ երեք անգամ³⁷: Այս իսկ պատճառով էլ միևնույն տեղում հիշատակվող II LIM IV ME XI թվականը³⁸ («երկու հազար չորս հարյուր տասնմեկ») նա գիտակցաբար պակասեցնում և տառադարձում է II LIM IV ME IX («երկու հազար չորս հարյուր ինը»)՝³⁹, որպեսզի ընդհանուր հայտարարի բերված թվականը ճիշտ ստացվի, որը բնագրի անթույլատրելի աղավաղում է:

²⁹ Xen., Anab., IV, 7, 21.

³⁰ УПД, № 12, ЛС, տող 13.

³¹ Նույն տեղում, էջ 37.

³² Նույն տեղում, էջ 134.

³³ УПД, № 12, ОС, տող 1.

³⁴ Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. II, Երևան, 1940, էջ 38.

³⁵ М. А. Исраелян, Изв. акад., էջ 116—117.

³⁶ MEA, № 480.

³⁷ УПД, № 12, ЛС, տող 14, ОС, տող 1, 2.

³⁸ Նույն տեղում, էջ 134 (լուսանկար):

³⁹ УПД, № 12, ЛС, տող 11.

գ) Մեր կարծիքով, SALGAD-hl-e «չուհակուհի(?)» գաղափարագրի SAL բացահայտիչը, լավ կլինեն, տալ որպես GEME, ինչպես այն ընդունված է⁴⁰։ Իսկ GAD սեպախումբը, որ ընթերցվում է նաև KAD և հանդիպում է Կարմիր բլուրի կավե սալիկների վրա⁴¹, տվյալ դեպքում գրության բուրրովին տարբերվում է նրանից։ Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այնտեղ գրված է ոչ թե GAD, այլ MUG (աքքադ. ցւ, mukku) «թեղ», որից կազմվում է նաև LU MUG անհայտ նշանակությամբ (ինչ որ տեսակի արհեստավոր) բառը⁴²։ Մեր կարծիքով, LUMUG գաղափարագիրը թերևս նշանակել է «դերձակ(?)», բառացի՝ «կարող(?)»։ Հետևաբար, GEMEMUG գաղափարագիրը կարելի է թարգմանել «դերձակուհի(?)»։ Սակայն, արձանագրության լուսանկարի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ GEME բացահայտիչի և MUG գաղափարագրի միջև կա մեկ այլ սեպախումբ ևս⁴³, որը զարմանալիորեն վրիպել է Ի. Դյակոնովի ուշադրությունից։ Այնտեղ գրված է ŠÜ (աքքադ. katāmu) «ծածկել» գաղափարագիրը⁴⁴, թերևս նաև՝ «ծածկոց(?)», «հագուստ(?)», որը նման գրությամբ հանդիպում է ինչպես հիշյալ արձանագրության մեջ⁴⁵, այնպես էլ այլուր⁴⁶։ Հետևաբար, առկա է ոչ թե SALGAD, այլ GEMEŠÜ·MUG գաղափարագիրը, որը, հավանաբար, բառացի նշանակել է «հագուստ կարող(?)», այսինքն՝ «դերձակուհի(?)»։

Այսպիսով, վերոհիշյալ հատվածը տառադարձվում և թարգմանվում է LXVI GEMEŠÜ·MUG-he-e, այսինքն՝ «վաթսուվեց դերձակուհի(?)»։

4. Արգիշթե I-ի՝ Արմավիրում հայտնաբերված, սակայն, ամբողջությամբ մեղ չհասած մի արձանագրության հատվածներից մեկում կարդացվում է I hu-pa-du արտահայտությունը⁴⁷, որը չի թարգմանվում⁴⁸։ Արձանագրության հրապարակված լուսանկարը (կատարված հնում⁴⁹ և վերջերս⁵⁰) ցույց է տալիս, որ, իրոք, նման ընթերցումը կարող է ճիշտ լինել։ Սակայն, այնուամենայնիվ, մեզ թվում է, որ տվյալ վերձանոմը ինչ-որ չափով հակասում է ուրարտերենի քերականական կանոններին։ Ուստի, կարելի է մտածել, որ այն ոչ թե վանկագիր է, այլ գաղափարագիր, թեև Ի. Դյակոնովը ենթադրում է, որ այն ուրարտերենի u-ով վերջացող բառերից մեկն է⁵¹։

Հայտնի է, որ si-pa սեպախումբը միասին վերցրած, որպես գաղափարագիր, կարդացվում է SAG (աքքադ. řēšu) «զլուխ»⁵²։ Սակայն, միևնույն si-pa (իմա՝ SAG) գաղափարագիրը ուրարտերենում վերարտադրվում է որ-

40 MEA, № 554.

41 УПД, № 4, ЛС, տող 4:

42 MEA, № 3.

43 УПД, էջ 134 (լուսանկար):

44 MEA, № 545.

45 УПД, № 12, ЛС, տող 4:

46 УПД, № 3, ЛС, տող 5. № 5, ОС, տող 1. № 7, ОС, տող 7. № 8, ЛС, տող y+1. № 10,

ЛС, տող 6. №11, ЛС, տող 2, 4:

47 УКН, № 142, տող 13 = HChI, № 98, A + B, տող 13:

48 УКН, էջ 266. HChI, էջ 112:

49 М. В. Никольский, Клинообразные надписи Закавказья («Материалы по археологии Кавказа», М., 1896, вып. V), աղյուսակ VIII:

50 А. А. Мартirosян, Аргистихинили, Ереван, 1974, աղյուսակ VI:

51 УПД, էջ 73:

52 MEA, № 115.

պես ԿU-PA և դարձյալ կարդացվում է SAG⁵³, ինչպես այն հանդիպում է Կար-
միր բլուրից հայտնաբերված արձանագրություններից մեկում (LÜNIG-SAG)⁵⁴
և Վանում հայտնաբերված կավե սալիկներից մեկի վրա (LÜNIG-SAG)⁵⁵:
Հետևաբար, քննվող II ԿU-PA-DU արտահայտության մեջ ԿU-PA վանկագիրը
նույնպես կարելի է տառադարձել SAG գաղափարագրով և միևնույն ժամա-
նակ վերջին վանկը՝ du, նույնպես դիտել գաղափարագիր՝ DU, որով և կստա-
նանք SAG-DU (աքքադ. qaqqadu) «գլուխ» գաղափարագիրը⁵⁶, Ուստի,
ենթադրյալ II ԿU-PA-DU վանկագիր ընթերցումը կարելի է տառադարձել որ-
պես գաղափարագիր՝ II SAG-DU, այսինքն՝ «երկու գլուխ»:

Ուստի նասիրությունները ցույց են տալիս, որ հիշյալ SAG-DU «գլուխ»
գաղափարագրի վանկագիր տարբերակը նույնպես վկայված է, սակայն, առ
այսօր ճիշտ չի թարգմանված: Այսպես, Վանա լճից արևելք, Գյուղակ գյու-
ղում հայտնաբերված՝ Մինուայի (810—786 թթ. մ. թ. ա.) արձանագրության
մեջ կարդում ենք. qar-me-ḫe [D]Ḫal-de-e áš-ḫu-li-né [D]Ḫal-di-i-na-a KÁ
[q]ar-me-ḫe D'A-ru-ba-né qar-me-ḫe DḪal-de-ḷ-e [p]u-ú-lu-si-ni-ka-i⁵⁷,
որտեղ, փաստորեն, անհայտ են ašḫulline և qarmeḫe բառերը:

Ներգործական սեռի ašḫu- բայը ըստ Գ. Մելիքիշվիլու նշանակում է
«կատարել (?)»⁵⁸, իսկ ըստ Ֆ. Քյոնիգի⁵⁹ և Մ. Դյակոնովի⁶⁰ «զոհաբերել»,
որը համեմատվում է խուռերենի ašḫ- «զոհաբերել» բայի հետ և ենթադր-
վում, որ ուրարտերենում այն, հավանաբար, նշանակել է «կատարել ծիսա-
կան գործողություններ, սահմանել ծես, զոհ»⁶¹: Մեր կարծիքով, ašḫu- բայն
ունի երկու իմաստ՝ «զոհաբերել» և «ձոնել»: Օրինակ՝ a-še áš-ḫu-me DUTU
ITU DḪal-di-i-e-i DINGIR-ti-še nu-ú-še⁶², այսինքն՝ «ծրբ ձոնեց-ինձ
Արևի ամսին հալղական աստվածությունը արքայություն (?)», որը Գ. Մե-
լիքիշվիլու մոտ չի թարգմանված⁶³, իսկ Ֆ. Քյոնիգը ašḫume բայը տըվ-
յալ դեպքում դիտում է որպես «ինձ բաժանեց»⁶⁴: Սակայն, քննվող հատ-
վածում ašḫu- բայը, իրոք, նշանակում է՝ «զոհաբերել», ուստի ašḫulline
ձևը կարելի է թարգմանել «թող-զոհաբերեն»:

Ինչ վերաբերում է qarmeḫe բառին, ապա Գ. Մելիքիշվիլու մոտ այն
թարգմանված է «տոնակատարություն (?)»⁶⁵ կամ «տոն (?)»⁶⁶, որը Ֆ. Քյո-
նիգը դիտում է որպես զոհաբերության հատուկ ձև⁶⁷, իսկ Ի. Դյակոնովը՝

⁵³ ԱԳՀԿՎ, էջ 92—93:

⁵⁴ УПД, № 7, ЛС, տող 12 (որտեղ LÜNIG-SAG=LÜa-ḫu-pa):

⁵⁵ УПД, № 12, ЛС, տող 10, ОС, տող 2 (որտեղ LÜNIG-SAG=LÜSA-REŠI):

⁵⁶ MEA, № 115:

⁵⁷ YKH, № 65, տող 31—36 = HChI, № 41 (որտեղ ḫe=ḫl, de=dI, né=ni, ḷ=I):

⁵⁸ YKH, էջ 390:

⁵⁹ HChI, էջ 175:

⁶⁰ УПД, էջ 87:

⁶¹ Նույն տեղում, էջ 69, ծան. 89:

⁶² YKH, № 81, տող 6—8:

⁶³ Նույն տեղում, էջ 188:

⁶⁴ HChI, էջ 74:

⁶⁵ YKH, էջ 404:

⁶⁶ G. A. Melikisvili, Die Götterpaatras an der Spitze des urartaischen Pan-
theons («Orientalia», vol. 34, fasc. 4, Roma, 1965, էջ 444):

⁶⁷ HChI, էջ 72 (ծան. 11), 198:

«սոնակատարութիւն (?)»⁶⁸։ Սակայն, ašḫulīne «թող-զոհաբերեն» բայը մեզ ստիպում է ենթադրել, որ qarmeḫe բառի վերոհիշյալ թարգմանութիւնները այնքան էլ հավանական չեն։ Մեր կարծիքով, ուրարտերենի qarmeḫe անհայտ նշանակութեամբ բառը, որ ձևով շատ նման է հիերոգլիֆիկ խեթերենի⁶⁹ և լուվիերենի⁷⁰ ḫarṃaḫi «զուլխ» բառին, թերևս, նույնպես նշանակում է «զուլխ (?)»։ Հետևաբար, վերոհիշյալ հատվածը կարելի է թարգմանել. «(մի) զուլխ (?) հալոբին թող զոհաբերեն՝ հալոյան դարպասներում, (մի) զուլխ (?) Լերուքանին, (մի) զուլխ (?) հալոբին՝ այս-արձանագրութեան-առջև»։ Եթե սովյալ թարգմանութիւնը հավանական համարվի, ապա ուրարտերենում հանդիպող SAG·DU «զուլխ» գաղափարագիրը կունենա իր վանկագիր տարբերակը՝ qarmeḫe «զուլխ (?)»։

5. Ռուսա I-ը (735—714 թթ. մ. թ. ա.) Տոնի գլուղում (վանից արևելք) կանգնեցրած իր արձանագրութեան սկզբում, ըստ Գ. Մելիքիշվիլու, ասում է. I] ri ú-e-l[i] [. . .] ba(?)·ba(?)·ni-[e](?) [DA]N·NUMEŠú-ra-tar-bi AMEŠ iš-ti-n[i] [p]i-la-ú'·e e-'a i-šl-na-a-ú'·[e] [t]e·ru-bi ti-ni 'R·u-[s]a-a-i su-e [a]-gu-bi PA₃ iš-ti-ni-ni 'Ru-sa-hi-na-[di]⁷¹, որն առանց էական տարբերութեան կրկնում է Ֆ. Քյոնիգը⁷²։ Առաջին դեպքում հատվածի կապակցված թարգմանութիւնը չի տրվում⁷³, իսկ երկրորդ դեպքում այն թերի է⁷⁴։ Պատճառը ոչ միայն առաջին տողի չվերականգնված և չթարգմանված լինելն է, այլ նաև երկրորդ տողում հանդիպող ենթադրյալ ū-ra-tar-bi բայը։

Արձանագրութեան լուսանկարի հիման վրա⁷⁵ առաջին տողի սկիզբը կարելի է կարդալ. [a]-re ú-e-l[e]-[du-ú-bé], այսինքն՝ «հողաշերտը կիտեցի» կամ «պատնեշը կիտեցի», քանի որ միևնույն are բառը հանդիպում է նաև խորխուշան տարեգրութեան մեջ⁷⁶, որը, մեր կարծիքով, նշանակում է հենց «հողաշերտ», «պատնեշ», իսկ քեledube բայը, եթե կարող է նշանակել «գնդեցի» (զինվորներ հավաքելու դեպքում), ապա կարող է նշանակել նաև «կիտեցի» (պատնեշ կառուցելու դեպքում)։

Հաջորդ կապակցութիւնը մենք տառադարձում ենք. GÈNba-ba-ni-[a] - [KAL]AGNU·MEŠ, որը հանդիպում է նաև վանկագիր գրութեամբ՝ GÈNba-ba-ni-a [k]u·ru-né-e ձևով⁷⁷, մի կապակցութիւն, որի քերականական իմաստը դեռևս չի բացահայտված։ Մեր կարծիքով, սովյալ դեպքում գործ ունենք խիստ ուշագրավ մի երևույթի հետ, որը հատուկ է միայն ուրարտերենին, որտեղ կապակցութեան առաջին անդամը տրված է եզակի թվի ներգոյական-առաջին հոլովով, իսկ երկրորդ անդամը՝ տրական-առաջին։ Հետևաբար, kurune բառը, որը սովորաբար թարգմանվում է «զորեղ»⁷⁸, սովյալ դեպքում կարե-

68 УПД, էջ 90։

69 J. Friedrich, Hethitische Wörterbuch, Heidelberg, 1952—1954, էջ 335.

70 Նույն տեղում, էջ 328։

71 YKH, № 268, տող 1—5 (որտեղ Ru = ru)։

72 HChI, № 121, տող 1—4։

73 YKH, էջ 332։

74 HChI, էջ 141։

75 ClCh, տախտակ XXXVIII։

76 YKH, № 127, III, տող 5։

77 YKH, № 266, տող 12—13 (որտեղ GÈN = KUR, né = ni)։

78 YKH, էջ 400։

լի է թարգմանել «ստորոտ», քանի որ նրա արմատը, անշուշտ, kure «տաք»⁷⁹ բառն է, իսկ կապակցության բառացի թարգմանությունը կլինի «լեռում ստորոտին», այսինքն՝ «լեռան ստորոտում»:

Հետևաբար, ուրարտերենում հանդիպող նման կազմությամբ կապակցությունները անհրաժեշտ է թարգմանել միևնույն ձևով, որոնք բոլորը միասին կազմում են հետևյալ խումբը.

ա) GĒNba-ba-ni-[a] [KAL]AGNU·MEŠ=GĒNba-ba-ni-a [k]u-ru-né-e «լեռան ստորոտում»: Կապակցության նախկին թարգմանությունը՝ «բարձր լեռներում»⁸⁰, որը բնադրում տրված է ոչ թե հոգնակի, այլ եզակի թվով⁸¹, այսպիսով, ճշգրտվում է:

բ) su-i-ni-a bé-de-e⁸² «ծովային գավառում», որը, մեր կարծիքով, վկայված է նաև su-i-ni-a-ni անհասկանալի ձևով⁸³, Կարելի է ենթադրել, որ տվյալ դեպքում վերջին ու վանկը սխալ ընթերցման արդյունք է կամ սխալագրություն և այն պետք է լինի սեպագրությանը շատ լավ հայտնի ŠEŠLAM (աքքադ. kibrātu) «մարզ», «շրջան» բառը⁸⁴, որը կարող էր հեշտությամբ շփոթվել ու սեպախմբի հետ: Ուստի, ենթադրյալ su-i-ni-a-ni անհասկանալի ձևը անհրաժեշտ է տառադարձել ու թարգմանել su-i-ni-a ŠEŠLAM «ծովային գավառում»: Հետևաբար, su-i-ni-a bé-de-e հատվածի նախկին թարգմանությունը՝ «լճի ափին»⁸⁵, որը իբր բառացի նշանակում է «լճի կողմում», «լճի մոտ»⁸⁶, կարելի է համարել ոչ ճիշտ:

գ) a-li-a ba-a-de ħa-si-al-[me] DINGIRMEŠ⁸⁷ «որի վերևում լսված էին-ինձ աստվածները», ընդ որում, նման թարգմանության համար մենք նկատի ենք առել նաև baduse «հոյակապ» բառը⁸⁸, որը, անշուշտ, կազմված է սույն bade «վերև» բառով: Այս հատվածների նախկին տառադարձությունը՝ a-li-i a-ba-a-di⁸⁹ և թարգմանությունը «որ ցանկացա (?)» (կատարել)»⁹⁰, քննության չեն դիմանում և մերժելի են:

դ) DĤal-di-a iš-ti-né-e⁹¹ «նալիդի տեղում (?)», այսինքն՝ «նալիդի փոխարեն (?)»: Նման կապակցության նախկին թարգմանությունը՝ «նալիդի աստծու համար»⁹², այսպիսով, ճշգրտվում է:

ե) a-le aš-ta-a-de KURE-ti-ú-ni-a iš-ti-né-ł-e⁹³ «Երբ դարձա (= եղա) Եթիունի տեղում (?) [= կողմում (?)]: Հատվածի նախկին թարգմանությունը՝ «Երբ (?) ուղևորվեցի դեպի Եթիունի երկիրը»⁹⁴, իրականու-

⁷⁹ Նույն տեղում:

⁸⁰ YKH, էջ 329:

⁸¹ YKH, № 266, ծան. 15:

⁸² YKH, № 128, A2, տող 11 (որտեղ bé=bi, de=di) և այլուր:

⁸³ YKH, № 266, տող 5, 12:

⁸⁴ MEA, № 65:

⁸⁵ YKH, էջ 237:

⁸⁶ YKH, № 128, A2, ծան. 5:

⁸⁷ YKH, № 127, III, տող 3 (որտեղ ūe=di) և այլուր:

⁸⁸ YKH, էջ 392:

⁸⁹ YKH, № 127, I, տող 4 և այլուր:

⁹⁰ YKH, էջ 212 և այլուր:

⁹¹ YKH, № 127, I, տող 16 և այլուր (որտեղ né=ni):

⁹² YKH, էջ 212 և այլուր:

⁹³ YKH, № 155, F, տող 5 (որտեղ le=li, de=di, né=ni, ł=l):

⁹⁴ YKH, էջ 286:

թյանը չի համապատասխանում, քանի որ այնտեղ հաշվի չեն առնված ուրարտերենի քերականական կանոններն ու օրինաչափությունները:

դ) i-né-ri-a IGI⁹⁵: «կրակի աշքում», որի՝ նման տարանջատումը պայմանավորված է հետևյալ հատվածով. I-ù DHal-di-še ma-a-se DINGIR i-né-re a-še uš-tù-ne⁹⁶, որը մեր թարգմանությանը կլինի այսպես. «Երբ հալդեն իր աստվածային կրակը (=զայրույթը) ցած ուղարկեց»: Նախկին I-ni-ri-a-ši տառադարձությունը⁹⁷ ոչնչով չի պայմանավորված և տեքստի մի աստիճանով հատված, դժվարեմբունելի լինելու պատճառով, չի թարգմանվում⁹⁸:

է) URUŠe-be-te-ri-a a-su-né⁹⁹ «Շեբեթերիայի մարզամ», [Q]u-ul-me-ri-¹⁰⁰ «a»-su-u-né¹⁰⁰ «Կուլմերեի մարզում», URUNA₄-ANŠE-ni-a a-su-né-[e]¹⁰¹ կամ URUNA₄-ANŠE-a a-su-né-e¹⁰², որոնք ընթերցվելու են URUAr-saškinia asune, այսինքն՝ «Արծաշքեական մարզում»¹⁰³ և այլն:

Քննվող հատվածի ú-ra-tar-bi ենթադրյալ բայը ուրարտերենի քերականական կանոններին չի ենթարկվում: Ըստ երևույթի, այնտեղ առկա է գաղափարագիր բառերի մի շարք, որը, մեր կարծիքով, հետևյալն է. U RA SILA-bé, որտեղ U գաղափարագիրը, հավանաբար, նշանակելու է «դաշտ», ինչպես այն հանդիպում է խորխոռյան տարեգրության կրկնօրինակում. Ú šú-ú-l-né ta-lu-su-né¹⁰⁴, այսինքն՝ «դաշտն ամբողջ հեղեղեց (?)»: Հաջորդ գաղափարագիրը դիտվելու է որպես բայ, այն է՝ RA (աքքադ. raḥašu) «հեղեղել»¹⁰⁵, տվյալ դեպքում՝ «հեղեղեցի», որը, այսպիսով, կարող է հանդիսանալ talusu- «հեղեղել (?)» բայի գաղափարագիր տարբերակը: Հաջորդ գաղափարագիրը՝ SILA (աքքադ. sūqu) «ճանապարհ», «ուղի»¹⁰⁶, տվյալ դեպքում տրված է որպես բայ՝ SILA-bé, այսինքն՝ «ուղեցի»: Մնացածն արդեն պարզ է. հետևաբար, ամբողջ հատվածը կարելի է տառադարձել և թարգմանել հետևյալ կերպ. [a]-re ú-e-l[e]-[du-ú-bé] [GÈN]ba-ba-ni-[a] KALAGNU-MEŠ Ú RA SILA-bé AMEŠ iš-ti-n[é] [p]i-la-¹⁰⁷ú-e e-¹⁰⁸a i-šl-na-a-¹⁰⁹ú-[e] [t]e-ru-bé ti-né ¹¹⁰Ru-[s]a-a-i su-¹¹¹e! [a]-jù-bé PA₅ iš-ti-ni-né ¹¹²Ru-sa-bi-na-[de], այսինքն՝ «Հողաշերտը կիտեցի լեռան ստորոտում, դաշտը հեղեղեցի, ուղեցի ջրերը այնտեղ առունների և առվակների, դրեցի անունը՝ Ռուսայի ծով: Անցկացրի ջրանցք այնտեղից դեպի-Ռուսախինել»:

Մոտավորապես նման պատկեր է նկարագրում նաև Սարգոն II-ը (721—

⁹⁵ YKH, № 128, A4, տող 11 (որտեղ IGI = -šl):

⁹⁶ YKH, № 128, A4, տող 1—2 (որտեղ se=si, né=ni, re=ri-):

⁹⁷ YKH, № 128, A4, տող 11:

⁹⁸ YKH, № 128, A4, ծան. 4:

⁹⁹ YKH, № 39, տող 14 (որտեղ né=ni):

¹⁰⁰ YKH, № 41b, տող 5—6 (որտեղ né=ni, <a> հավելումը մերն է):

¹⁰¹ YKH, № 276, JIC, տող 36 (որտեղ URUNA₄-ANŠE=URU tāk-tum(?), né=ni, [e] վերականգնումը մերն է):

¹⁰² HChI, № 125, Vs, տող 26—27 (որտեղ ANŠE=ANŠU, né=ni):

¹⁰³ ЛУЦГА, էջ 96:

¹⁰⁴ YKH, № 123, A4, տող 12 (որտեղ U=u-, né=ni):

¹⁰⁵ MEA, № 328.

¹⁰⁶ MEA, № 12.

705 քք. մ. ք. ա.) Ուրարտու կատարած իր արշավանքի ժամանակ, մ. ք. ա. 714 ք., երբ մտնում է Ուլխու քաղաքը¹⁰⁷:

6. Արգիշթի I-ի հորինողյան տարեգրության կրկնօրինակում, դեպի Ճո-րոխի ավազանը կատարած արշավանքի նկարագրության հատվածներից մեկում, ըստ Գ. Մելիքիշվիլու ասված է. [a](?)-ri-bi e-ri-da-bi [k]a-ú-ki gu-nu-si-ni-[e] [1] i ga ra ab hu bi [e] [...][a](?)[...]¹⁰⁸[?] [1] d[a] a ka¹⁰⁹, որը Ֆ. Քյոնիգի մոտ տառադարձված է. a(?)-ri-bi e-gl(!)-da-bi [k]a-ú-ki gu-nu-si-ni-l [me](?)-l ga-ra-ab hu(?)-bi(?)-ni-e e-'a a[r]-da-a-ka-i¹⁰⁹. Վերջերս այս հատվածի նորագույն մեկնաբանությունը հանդես եկավ երիտասարդ ուրարտագիտուհի Ն. Ենգիբարյանը: Մեզ հետաքրքրող հատվածը նա կարդում և թարգմանում է հետևյալ կերպ. [a](?)-ri-bi e-ri-da-bi [k]a-ú-ki gu-nu-si-ni-e [KUR]I-ga-ra-ab hu-bi-ni-e [URU]A-a[r]-da-a-ka-i, այսինքն՝ «aribi ելավ իմ առջև զորքը Իգարաբ-հովտի՝ Արգա քաղաքի առջև»¹¹⁰:

Մեր կարծիքով, հատվածի առաջին բառը անհրաժեշտ է տառադարձել կամ [a](?)-ri-bé, այսինքն՝ «հարյուր(?)»-հազար», որը, տվյալ դեպքում, շափազանց մեծ թիվ է և անընդունելի, և կամ՝ [šú](?)-ri-bé, այն է՝ «հինգ(?)»-հազար», որը կարող է, թերևս, ընդունելի համարվել: Հետևաբար, սպասելի է, որ հաջորդ բառը լինի գոյական՝ «մարդ», «զինվոր», «թշնամի» կամ նման մի բան, այնինչ այնտեղ առկա է շեղոք սեռի մի բայ՝ e-ri-da-bé, որը, այսպիսով, կարող է ի շեղ դարձնել մեր վերոհիշյալ ենթադրությունը: Սակայն, հայտնի է, որ սույն e-ri-da-bé [k]a-ú-ke gu-nu-si-né-e] արտահայտությունը այլուր հանդիպում է šl-a-bé ka-ú-ke-e gu-nu-si-l-né-e ձևով¹¹¹, այսինքն՝ «ելավ առջև կովով»: Հետևաբար, քննվող հատվածի [šú](?)-ri-bé «հինգ(?)»-հազար» և «ելավ առջև կովով» արտահայտությունների միջև անհրաժեշտ է փնտրել նաև վերոհիշյալ գոյականներից մեկը՝ «մարդ», «զինվոր», «թշնամի» և այլն: Մեր կարծիքով, այն պետք է փնտրել հենց e-ri-da-bé կարծեցյալ բայի մեջ: Հայտնի է, որ DA (աքքադ. tehu) գաղափարագիրը նշանակում է «մոտենալ»¹¹², որը, այսպիսով, փաստորեն, փոխարինում է ուրարտերենի šl-a- «ելնել» բային: Հետևաբար, DA-bé նշանակում է šlabe «ելավ», որի սկզբի երկու սեպագիր վանկերը կարելի է տառադարձել e-re և թարգմանել «մարդ», «ծողովորդ», կապելով այն (LU)erele «արքա» բառի հետ, որը բառացի կարող է նշանակել «ծողովորդի գլուխ», ճիշտ այնպես, ինչպես այն հանդիպում է վրացերենում՝ eristavi (ერისთავი) «ծողովորդի գլուխ»:

Հատվածի հաջորդ երկու բառերը՝ [KUR]I-ga-ra-ab hu-bi-ni-e, ցույց են տալիս մի այնպիսի կապակցություն, որտեղ եթե երկրորդ բառը տրված է եզակի թվի բացառական-գործիական-առաջին հոլովով, ապա առաջին բառը որպես հատկացուցիչ նույնպես պետք է տրված լինի միևնույն հոլովով

¹⁰⁷ И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту («Вестник древней истории», 1951, № 2 — 4) (այսուհետև՝ АВИИУ), № 49, տող 192—212.

¹⁰⁸ УКН, № 128, А1, տող 18—21:

¹⁰⁹ НСН, № 81, Rs, տող 18—21:

¹¹⁰ Ն. Գ. Ենգիբարյան, Ուրարտական Igarab-hubi երկիրը և Arda քաղաքը (ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր», 1975, № 11, էջ 80):

¹¹¹ УКН, № 155, E, տող 9—10 (սխառեղ bé=bi, ke=ki, né=ni):

¹¹² МЕА, № 335.

(հմմտ. ma-a-ni-né¹¹³ ԴHal-di-né bé-e-di-né¹¹⁴ «Թող-լինի Խալգեի կողմից», ma-a-ni-né¹¹⁴ ԴHu-tu-i-ni-né bé-di-né¹¹⁴, «Թող-լինի Խուտուինեի կողմից», ma-a-ni-né¹¹⁵ ԴŠi-i-u-i-ni-**<né>** bé-di-né¹¹⁵, «Թող-լինի Շիվինեի կողմից» և այլն), այնինչ համապատասխան -ine ցուցիչի փոխարեն տվյալ դեպքում առկա է ab սեպախումբը: Մեր կարծիքով, հենց այս սեպախումբն է, որ արտահայտում է թե՛ տեղանվան վերջավորությունը, և թե՛ հոլովի ցուցիչը: Ուստի այն կարելի է դիտել որպես գաղափարագիր, այսինքն՝ AB (աքքադ. tâmtu) «ծով»¹¹⁶, որի ուրարտերենը կլինի šue «ծով», իսկ եզակի թվի բացառական-գործիական-առաջին հոլովը՝ šuine, մի ձև, որը փոխարինված է AB «ծով» գաղափարագրով: Հետևաբար, հատվածի հիշյալ երկու բառերը կարելի է տառադարձել [KUR]I-a₀-ra-AB hu-bi-ne-e ձևով: Նկատենք, որ ուրարտացիները երկու ձայնավորների միջև երբեմն մտցնում են հազագ՝ լ, որը առկա է նաև տվյալ դեպքում, սակայն, գրություն մեջ այն երբեմն բացակայում է: Հետևաբար, երկրորդ դեպքի պայմաններում [KUR]I-a₀-ra-AB տեղանունը կարող էր հանդես գալ [KUR]I-a-ra-AB ձևով, որը հնարավորություն կտար կապակցությունը թարգմանել «Խարածուի դաշտից»: Այսպիսով, մեր առաջարկած տառադարձությունը հնարավորություն է տալիս [KUR]I-a₀-ra-AB գրության տակ դիտել [KUR]Iarašu երկրանունը:

Հայտնի է, որ ուրարտերենի ձայնավոր վերջավորությունները հայերենում հաճախ ընկնում են: Օրինակ, ուրարտ. URUTušpa>հայ. Տոսպ: Հետևաբար, KUR]Iarašu տեղանունը հայերենում կարող էր հանդես գալ առանց ձայնավոր վերջավորության: Հայտնի է նույնպես, որ ուրարտերենի բառավերջի a ձայնավորը հայերենում հանդես է գալիս որպես է: Օրինակ, ուրարտ. URUAršaš(ku)> հայ. Արճէշ և այլն¹¹⁷, ուստի, նշված երևույթը կարող է հանդես եկած լինել նաև տվյալ դեպքում: Հայտնի է նաև, որ հայերենում գոյություն ունի ia (իա)>e հնչյունափոխություն, որի առկայության պայմաններում, եթե այն գործել է նաև հնում, և այն էլ բառասկզբում, ապա կստանայինք հետևյալը. [KUR]Iarašu> *brէծ: Հայ մատենագրության մեջ հիշատակված Ծրէզ ավանի անունը¹¹⁸, ամենայն հավանականությամբ, ծագում է սույն տեղանունից՝ *brէծ>Ծրէզ (հմմտ. Արծն>Արգն, Արծնի>Արգնի և այլն), որից և հետագայում իր անվանումն է ստանում Ծրիզայի (այն է՝ Ծրզնկայի) դաշտը (իմա՝ [KUR]Iarašui hube «Խարածուի դաշտ»):

Այսպիսով, ամբողջ հատվածը (քանի որ վերջին բառը ն. Ծնգիբարյանի մոտ միանգամայն ճիշտ է փերժանված), մեր կարծիքով, հետևյալն է. [šú](?)-ri-bé e-re DA-bé [k]a-ú-ke qu-nu-ši-né-e,¹¹⁹ [KUR]I-a₀-ra-AB hu-bi-né-e,¹²⁰ [U]RU'A-ar-da-a-ka-i, այսինքն՝ «Հինգ(?) հազար մարդ ելավ առջև կռվով՝ Խարածուի դաշտից, Արգայի-առջև»:

¹¹³ YKH, № 93, տող 4 (որտեղ né=ni, bé=bi)։

¹¹⁴ YKH, № 94, տող 4 (որտեղ né=ni, bé=bi)։

¹¹⁵ YKH, № 95, տող 4 (որտեղ ū=ū, bé=bi, né=ni, <né> հավելումը մերն է)։

¹¹⁶ MEA, № 128.

¹¹⁷ ЛУЦГА, էջ 86—88։

¹¹⁸ «Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 399: «Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1907 (կաղմի վրա 1908), էջ 329։

Ուրարտական արձանագրություններում վկայված, սակայն, չվերծանված գաղափարագրերը սրանցով չեն սահմանափակվում: Այդ գաղափարագրերը, որոնց թիվը մեր հաշվումներով երեսունից ավելի է, հրատարակության կենդիւյացվեն ապագայում:

НОВОВЫЯВЛЕННЫЕ УРАРТСКИЕ ИДЕОГРАММЫ

ОВАНЕС КАРАГЕЗЯН

Резюме

В течение последних 25 лет (1950—1975 гг.) советскими и зарубежными востоковедами расшифровано более сорока урартских идеограмм, часть которых корректируется нами, а ряд других идеограмм расшифровывается впервые, а именно: LÜKÜ «ювелир», HUN·GÁ «наемник», LÚNIG·SAG «слуга(?)», GÍR «меч», GIŠNA, «барабан», NÍG·GA «сокровищница», ZIZ «хлеб», «провиант», GI, «возвращаться», «повернуть», A' «сила», «мощь», «могущество», HA «часть», «доля», KUŠ·PA «удила», BAL «копать», TEMEN «основа», «почва», а также одно идеографическое написание названия города — URUNA, ANŠE «Арцашку» и т. д.

Наши дальнейшие исследования показали, что в урартских надписях имеются десятки подобных идеограмм, каковыми являются: NA, ŠÚ·A «трон» (прежнее чтение NA, šú-a-, без перевода), GĒNULLÚ «хребет» (прежнее чтение KUR KA'(?), с переводом «через ворота(?) страны» или KURKA', с переводом «(гора) Шешетина»), GEMESÚ·MUG «портниха(?)» [прежнее чтение SALGAD «ткачиха(?)»], SAG·DU «голова» (прежнее чтение hu-pa-du, без перевода), слоговое чтение которой — qar-me-je «голова(?)», ŠEŠLAM «область», «район» (прежнее чтение pi в конце слова šu-i-pi-a-pi), слоговое чтение которого bede «область», «сторона», Ú «долина» (прежнее чтение ú в непонятной форме ú-ra-tar-bé), слоговое чтение которого hubē «долина», RA «обводнять» (прежнее чтение га в той же форме ú-ra-tar-bé), слоговое чтение которого talusu- «обводнять(?)», SILA «направить» (прежнее чтение tar опять в той же форме ú-ra-tar-bé), DA «подходить», «выйти» (прежнее чтение da в непонятной форме e-re-da-bé), слоговое чтение которого šia- «выйти», AB «море» в топониме [KUR]I-lā, ga-AB hu-bi-né-e (прежнее чтение ab), слоговое чтение которого šue «море», что делает возможным расшифровать данное словосочетание как [KUR]I-larasu-ne hubi-ne, то есть «из долины Иарацу». Следовательно, KUR-larasu > *Erēc (*b₁ṛtš) > Eṛēz (i₁ṛtš) — топоним, который засвидетельствован в древнеармянской историографии как город, так и долина того же города, на верхних течениях реки Евфрат.

Число урартских нерасшифрованных идеограмм, по нашим подсчетам, достигает более чем трех десятков, издание которых намечается в ближайшем будущем.